# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 9 - 10 (16404) ՇԱԲԱԹ, 6 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է»

*Փետրվարի 3-ին աշխատանքն սկսեց Վրաստանի խորհրդարանի գարնանային նստաշրջանը: Ստեղծված ավանդույթի համաձայն, նոր նստաշրջանի մեկնարկին ամենամյա հաշվետվությամբ ելույթ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:*

*Նախագահի ամենամյա հաշվետվությանը առաջին անգամ ներկա գտնվեցին Վրաստանի վարչապետը եւ երկրի նախարարների կաբինետի անդամները: Այստեղ էին նաեւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները: Վրաստանի խորհրդարանի լիագումար նիստին ներկա էր նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:*



Իր խոսքում Գիորգի Մարգվելաշվիլին, մասնավորապես, նշեց. «Այս տարի մենք նշում ենք Վրաստանի անկախության 25-ամյակը: Քանիինգ տարի առաջ մենք միասին ավարտեցինք մեր նախնիների պայքարը Վրաստանի անկախության համար, սակայն դեռեւս անցնելու ենք անկախությունից ազատություն տանող ճանապարհը: Մենք ձեռք ենք բերել անկախություն, սակայն ազատության համար պայքարը շարունակվում է: Մենք ստեղծելու ենք պետություն, որը կլինի ոչ միայն քաղաքականապես անկախ, այլեւ քաղաքականապես ազատ: Դա պետություն է, որտեղ երաշխավորված կլինեն յուրաքանչյուր մարդու քաղաքական եւ սոցիալական իրավունքները, դա միասնություն է, որտեղ գերակայում են օրենքները եւ ոչ թե անհատները»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՅՏԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԸ»

*Փետրվարի 1-2-ին Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում Ազատ տեղեկատվության ինստիտուտը (IDFI), Բրեմենի համալսարանի գործընկերությամբ եւ Գերմանիայի ԱԳ նախարարության ֆինանսական աջակցությամբ, անցկացրեց «Վրաստանի ժողովրդավարական եւ տնտեսական զարգացման հեռանկարները» միջազգային գագաթաժողովը:*



Գագաթաժողովն իրենից ներկայացնում էր «2020-ռազմավարական ծրագիր՝ քաղաքացիական հասարակության ներգրավման հզորացում» նախագծի հանրագումարային միջոցառումը: Գագաթաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Ողջույնի խոսքով ելույթ ունեցան Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը, Վրաստանում Գերմանիայի դեսպան Բետինա Կադենբախը եւ IDFI-ի տնօրեն Գիորգի Կլդիաշվիլին: Իր ելույթում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ իր գլխավորած

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄՇԱԿՈՒՅԹ

## ԲԱՐՁՐԱՑԱՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՎԱՐԱԳՈՒՅՐԸ



*Հունվարի 30-ին Վրաստանի մայրաքաղաքն ու աշխարհի տարբեր երկրներից ժամանած հյուրերը տոնում էին Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի թատրոնի հանդիսավոր բացումը, որն իսկապես փառավորվեց ոչ միայն վերանորոգված շենքի կատարելությամբ, այլեւ օրը խորհրդանշող մի շարք հիշարժան միջոցառումներով:*

Նախ՝ շենքի մուտքի մոտ բացվեց օպերայի լեգենդար սոպրանո, մանկավարժ, Վրաստանի ժողովրդական արտիստ Մեդեա Ամիրանաշվիլու աստղը, էթերիով ժամանակին հիացել էր աշխարհը: Արարողությանը հաջորդեցին թատրոնի նախասրահում մշակութային այս յուրովի մատենագրի՝ դեռեւս 1845-ին ձեւավորված վրացական օպերայի պատմությունը պատկերող երաժշտական իրերի ու դերասանների շքեղ զգեստների ֆոտոցուցադրությունն ու կենդանի տեսարանները, որոնք ոմանց վերապրելու, մյուսներին թատրոնի պատմությանը ծանո-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՆՄԱՆ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ, ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԱԺԱՆԵԼ»

### ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Փետրվարի 1-2-ին Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին պաշտոնական այցով գտնվում էր Հայաստանում:*



**ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ**

Փետրվարի 1-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Զրուցակիցները քննարկեցին երկկողմ միջպետական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը, պաշտպանության բնագավառում վրաց-հայկական փոխգործակցությանը եւ տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցեր:

Սերժ Սարգսյանն ընդգծեց հայ-վրացական ավանդական գործընկերային հարաբերությունների, ինչպես նաեւ հավասարակշռված մոտեցումների կարեւորությունը տարածաշրջանային կայունության ու խաղաղության պահպանման տեսանկյունից:

Իր հերթին, Թինա Խիդաշե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ ԾԱՆՈԹԱՑԱՎ «ՆՈՐԱՇԵՆԻ» ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հնգամյա վերանորոգման աշխատանքների ավարտից հետո, Թբիլիսիի Զաքարիա Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի բացման արարողության առթիվ, Թբիլիսիում գտնվող Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի, Վրաստանի մշակույթի նախարարության, հուշարձանների

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

*ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Գիորգի Կվիրիկաշվիլուն շնորհավորական ուղերձ է ուղարկել Վրաստանի վարչապետ նշանակվելու կապակցությամբ եւ նրան հրավիրել է միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին, որը Վաշինգտոնում անցկացվելու է 2016 թվականի գարնանը:*



ԱՄՆ նախագահն իր ուղերձում Վրաստանին աջակցություն է հայտնել եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին եւ պատրաստակամություն հայտնել համագործակցել Գիորգի Կվիրիկաշվիլու հետ:

«Մեր գլոբալ առաջնահերթությունների իրացման գործում Վրաստանը հանդիսանում է մեր կարեւորագույն գործընկերը, որը անձնազոհաբար մասնակցում է աֆղանական առաքելությունում եւ ավանդ ներդնում Եվրոպայի էներգա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՅՏԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կառավարությունը առավելագույնս ձգտում է արտահայտել ժողովրդի կամքն ու շահերը: Նրա խոսքերով, կառավարության գործունեությունը բաց է ու թափանցիկ: Վարչապետն անդրադարձավ իշխանության տարբեր ճյուղերի, քաղաքացիական հատվածի եւ փորձագետների մասնակցության անհրաժեշտությանը՝ երկրի համար կարեւորագույն հարցերի մշակման եւ քննարկման գործընթացում: «Դա արվում է նրա համար, որպեսզի որոշումներն ընդունվեն փոխզիջման եւ քաղաքացիական համաձայնության հիման վրա: Դա եվրոպական կառավարման ոճն է, որը նորույթ է մեզ համար ու աստիճանաբար ներդրվում է Վրաստանում»,- հայտարարեց վարչապետը:

Նրա գնահատմամբ, վերջին երեք տարիներին Վրաստանը ժողովրդավարական ինստիտուտների հզորացման տեսանկյունից կայուն առաջընթաց է ապահովել: Իսկ օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռքբերումները միջազգային ճանաչման են արժանացել:

Թբիլիսիում անցկացվող գագաթաժողովում քննարկվեցին Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան միտումների, Վրաստանի եւ Եվրամիության գործընկերության հիմնական ուղղությունների, Վրաստանի ժողովրդավարական եւ տնտեսական զարգացման հեռանկարներին առնչվող հարցեր:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԿԱԹՆԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



***Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն, իր գլխավորած գերատեսչությունը կֆինանսավորի «Գերցեպտին» պրեպարատով կաթնագեղձի քաղցկեղի բուժման կուրսը:***

Նրա խոսքերով, տարածաշրջանների բնակիչները դեղորայքը կստանան 80 տոկոսանոց համաֆինանսավորմամբ, ռեֆերալ սպասարկման պետական ծրագրի շրջանակներում: Ինչպես նշեց նախարարը, իրականացվող բարեփոխման նպատակն է մեծացնել դեղորայքի մատչելիությունը: Սերգեենկոյի խոսքերով, սոցիալապես անպաշտպան բնակիչներին կվերապահվեն լրացուցիչ արտոնություններ եւ դեղորայքի առավելագույն մատչելիություն:

«Վերջին ժամանակներում Թբիլիսիի քաղաքապետարանը հանդես եկավ կարեւոր նախաձեռնությամբ, երբ բանակցություններ սկսեց «Գերցեպտին» թողարկող ընկերության հետ: Այդ բանակցությունները մեզ թույլ տվեցին ձեւակերպել պայմանավորվածություն, որն արդեն ստորագրվել է: Մեզ տրվեց Վրաստանի ողջ մասշտաբով նախագիծ իրականացնելու հնարավորություն, որի նախաձեռնողը Թբիլիսիի քաղաքապետարանն էր: Տարվա հաշվարկմամբ, հիվանդների բուժման համար ծախսվում էր 50 հազար լարի: Այդ գումարը մենք նվազեցրինք մինչեւ 7 հազարը: Գնի մի մասը նվազեցրեց ընկերությունը, իսկ 80 տոկոսի փոխհատուցումը ստանձնեց պետությունը»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

***Փետրվարի 4-ին Վրաստանի ֆինանսների նախարարությունում կայացավ համերաշխության հիմնադրամի հաշվետվության շնորհանդեսը, որին մասնակցեց ֆինանսական գերատեսչության ղեկավար Նոդար Խադուրին:***

Իրականացված միջոցառումների եւ առաջիկա ծրագրերի մասին տեղեկատվությունը ներկայացրեցին հիմնադրամի գործադիր տնօրեն Մարիամ Ջաշին եւ մշտական գործող հանձնաժողովի անդամ, կառավարության վարչակազմի ղեկավարի տեղակալ Նինո Կոբախիձեն:

Նրանց տեղեկատվությամբ, 2016 թվականի հունվարի 31-ի դրությամբ, ընդհանուր առմամբ, հիմնադրամ է փոխադրվել 5,7 միլիոն լարի: Ներկա փուլում հաստատվել է 7,9 միլիոն լարիով 215 երեխաների ու մինչեւ 22 տարեկան երիտասարդների ֆինանսավորումը: Նախաձեռնության իրականացմանը ներգրավվել է ավելի քան 55 հազար հանրային ծառայող:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անվտանգության կայունացման գործում: Անկախության ձեռք բերումից հետո Վրաստանն էական քայլեր է կատարել եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին: Վստահեցնում եմ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները առաջիկայում էլ կաջակցեն այդ ուղեծիրը: Ձեր ղեկավարությունը վիթխարի նշանակություն կունենա Վրաստանում ժողովրդավարության ամրապնդման, տնտեսական բարեկեցության ապահովման եւ Վրաստանի եվրատլանտյան միտումների կենսագործման համար: Ես հուսով եմ նայում Ձեզ հետ համագործակցությանը՝ մեր երկրների միջեւ գործընկերության ամրապնդման համար: Հուսով եմ, որ դուք կմիանաք այս տարվա միջուկային անվտանգության գագաթաժողովին, որպեսզի շարունակենք մեր ջանքերը՝ ուղղված տարածաշրջանի կայունությանն ու անվտանգությանը»,- ասված է Բարաք Օբամայի շնորհավորական ուղերձում:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ ԾԱՆՈԹԱՑԱՎ «ՆՈՐԱՇԵՆԻ» ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պաշտպանության գործակալության բարձրաստիճան պաշտոնյաների ուղեկցությամբ, հունվարի 31-ին այցելեց Թբիլիսիի Կ.Աբխազիի (նախկին Լեսելիձեի) փողոցում գտնվող վերանորոգված «Նորաշեն» եկեղեցի: Նախարարը ծանոթացավ տաճարի վերանորոգման աշխատանքների ընթացքին, որը իրականացվում է «Քարթու» հիմնադրամի համաֆինանսավորմամբ: Ինչպես տեղեկացրեց շինարարական աշխատանքների ղեկավարը, արդեն ավարտվել է կառույցի հիմքերի ամրացումը, միջոցներ են ձեռնարկվել ստորգետնյա ջրերի դուրսբերման ուղղությամբ: Շինարարների հավաստմամբ, եկեղեցու վերանորոգման աշխատանքներն ավարտվելու են 2017 թվականի կեսերին:



*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ



***ԱՄՆ-ը շուրջ 10 մլն դոլար կհատկացնի Վրաստանի սահմանապահ ոստիկանությանն օգնություն ցուցաբերելու համար: Ինչպես հայտնել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, համապատասխան համաձայնագիրը փետրվարի 1-ին Թբիլիսիում ստորագրվել է Վրաստանի սահմանապահ ոստիկանության եւ ԱՄՆ-ի ռազմական սպառնալիքների կրճատման գործակալության ներկայացուցիչների միջեւ:***

ՆԳՆ-ի տվյալներով, համաձայնագրի իրագործման առաջին փուլում կսկսվի սահմանապահ երկու սեկտորների՝ «Կասումլո»-ի եւ «Քեդա»-ի ենթակառուցվածքի շինարարությունը, ինչպես նաեւ վրաց-հայկական սահմանի տեղամասը կհանդերձվի դիտարկման եւ մոնիթորինգի տեխնիկական միջոցներով:

Ինչպես նշում է գերատեսչությունը, համաձայնագրի հիման վրա պլանավորված է սահմանապահ սեկտորները հանդերձել աշտարակներով, գիշերային տեսունակության խցիկներով, ապահովել հատուկ տեխնիկայով ու ավտոտրանսպորտային միջոցներով:



ՍԻՐԻԱ

## ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ

*Սիրիական ընդդիմությունը պատրաստ է Ժնեւում առանց նախապայմանների բանակցությունների մեկնարկին: Այս մասին լրագրողներին հայտարարել էր Ռիադի կողմից աջակցվող Բանակցությունների գծով բարձրագույն կոմիտեի պաշտոնական ներկայացուցիչ Սալեմ ալ-Մուսլաթը:*

*Նրա խոսքերով, պատվիրակությունը պահանջելու է հումանիտար մուտք դեպի սիրիական քաղաքներ, բանտարկյալների ազատ արձակում, հումանիտար օգնություն ցուցաբերելու հնարավորություն. Սալեմ ալ-Մուսլաթը ընդգծել է, որ «սրանք նախապայմաններ չեն հանդիսանում»: «Դրանք մեր նախապայմանները չեն: Մենք ժամանել ենք այստեղ եւ պատրաստ ենք սկսել բանակցությունները, բայց մենք այստեղ ենք նաեւ այն բանի համար, որ երաշխավորենք ՄԱԿ-ի ԱԽ-ի 2254-ի կյանքի կոչումը: Մենք պատրաստ ենք բանակցություններ վարելուն: Մենք այստեղ ենք ժամանել, որպեսզի գործընթացը հաջողությամբ պսակվի»,- ասաց նա:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ ՓԱԿՎԵԼ Է

*Հունաստանում գյուղացիների կողմից շարունակվող բողոքի ակցիաների պատճառով պաշտոնական Անկարան որոշում է կայացրել անժամկետ փակել Հունաստանի հետ ցամաքային սահմանը:*

*Փետրվարի 1-ից փակվել են Հունաստան տանող թուրքական երկու՝ Իփսալա եւ Փազարքուլե սահմանային անցակետերը:*

*Հունաստանի կառավարության կողմից արվող հատկացումները ոչ բավարար համարելով՝ տեղի գյուղացիները բողոքի ակցիաներ են սկսել երկրում:*

## ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

*«Բաց երկնքի» պայմանագրի շրջանակում Ռուսաստանի կողմից Թուրքիայում դիտորդական թռիչքների անցկացման ձախողումը հերթական սկանդալի պատճառ է դարձել ռուս-թուրքական հարաբերություններում: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության խոսնակ Թանժու Բիլգիչը տեղեկացրեց, որ թուրքական եւ ռուսական կողմը համաձայնության չեն եկել թռիչքների օդային միջանցքի տրամադրման հարցում:*

*ՌԴ պաշտպանության նախարարության հայտարարությամբ Ռուսաստանը չի պատրաստվում առանց ուշադրության եւ համապատասխան արձագանքի թողնել Թուրքիայի կողմից բաց երկնքի մասին համաձայնագրի խախտումը: Ռուսաստանը գտնում է, որ Թուրքիան պատրաստվում է ռազմական ինտերվենցիա անցկացնել Սիրիայում: Այդ մասին հայտարարել է Ռուսաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Իգոր Կոնաշենկովը:*

*Նրա տեղեկատվությամբ, ռազմական նախապատրաստություններն անցկացվում են Թուրքիա-Սիրիա սահմանագծում:*

ՀԱՄԱՃԱՐԱԿ

## ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԴԵՂՈՐԱՅՔ «ԶԻԿՈՅԻ» ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ

*Հնդկական Bharat Biotech դեղագործական ընկերության ներկայացուցչի հայտարարությամբ, իրենք «Զիկոյի» պատվաստանյութի մշակմանը ձեռնամուխ են եղել դեռեւս մեկ տարի առաջ եւ ներկայումս դրանք ընդգրկված են կ, որ «Զիկո» վիրուսը ներկայումս լայն տարածում է գտել աֆրիկյան մի շարք երկրներում եւ գլխավոր վիրուսակիրը մոծակն է: Նոր վիրուսը մեծ տագնապ է առաջացրել աշխարհում:*

## Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՄԵՂՄԱՑՎՈՒՄ ԵՆ




***Ընթացիկ տարվա մարտից Վրաստանի եւ Թուրքիայի մաքսային ծառայությունների միջեւ մեկնարկում է միջազգային ճանապարհային բեռնափոխադրումների (TIR) վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման գործընթացը: Այդ մասին հայտնել է Վրաստանի ֆինանսների նախարարությունը:***

Վրաստանն ու Թուրքիան սկսում են իրագործել TIR նախագիծը, որն առնչվում է էլեկտրոնային ռեժիմով TIR-ի մասին տեղեկատվության փոխանակմանը:

Համապատասխան փաստաթուղթը Անկարայում ստորագրել են Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին եւ Թուրքիայի առեւտրի ու մաքսային հարցերով նախարար Բյուլենթ Թուֆենգչին:

Եռամյա նախագիծը կհեշտացնի երկու երկրների մաքսային ծառայությունների միջեւ տեղեկատվության էլեկտրոնային փոխանակումն ու բեռների համար մաքսային ընթացակարգերը: Թուրքիան Վրաստանի հիմնական առեւտրային գործընկերն է: 2015 թվականին երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է մոտ 1,52 միլիարդ դոլար, որը հավասար է Վրաստանի արտաքին ամբողջ առեւտրի 15,3 տոկոսին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԱՎԵԼԱՑՎԵՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

***2016 թվականի փետրվարից Թբիլիսիի մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձն ավելացվել է: Այդ մասին հայտարարեցին Թբիլիսիի փոխքաղաքապետ Իրակլի Լեկվինաձեն եւ մանկապարտեզների կառավարման գործակալության տնօրեն Թեմուր Թորդինավան:***

Աշխատավարձն ավելացվել է տոկոսային հետեւյալ համապատասխանությամբ. կրթական ծրագրերի համակարգողինը՝ 5 տոկոս, տնտեսական մասի համակարգողինը՝ 10 տոկոս, հիգիենիկ եւ առողջապահության ապահովման համակարգողինը՝ 15 տոկոս, դաստիարակինը՝ 10 տոկոս, դաստիարակի օգնականինը (դայակինը)՝ 10 տոկոս, երաժշտության եւ պարերի ուսուցչինը՝ 7 տոկոս, խոհարարինը՝ 20 տոկոս, խոհարարի օգնականինը՝ 20 տոկոս, հավաքարարինը՝ 20 տոկոս, գործերի կառավարիչինը՝ 15 տոկոս, հոգեբանինը՝ 15 տոկոս, լոգոպեդինը՝ 10 տոկոս:

Բացի այդ, մանկապարտեզների տնօրենների աշխատավարձը հավասարեցվում է: Ընդհանուր առմամբ, ավելացվել է 6585 աշխատակցի աշխատավարձը: Մանկապարտեզների աշխատակիցների ավելացված աշխատավարձի համար գործակալության բյուջեից հատկացվում է 3642470 լարի:

# ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ



Մանկապարտեզներում ներդրվում է երկաստիճան ուսուցման համակարգ: Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Էկա Բեսելիան. 5-6 տարեկան երեխաների համար՝ դպրոցներին նախապատրաստելու նպատակով ներդրվում է հատուկ ծրագիր: Նրա խոսքերով, առաջին աստիճանը նախատեսված է մինչեւ 2 տարեկան երեխաների համար, իսկ երկրորդը՝ 2-ից մինչեւ նախադպրոցական տարիքի երեխաների համար: «5-6 տարեկան երեխաները կկարողանան անցնել կրթության նախարարության կողմից մշակված դպրոցական նախապատրաստության հատուկ ծրագիր»,- հայտարարեց Էկա Բեսելիան:

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՀԻՆԳ ՏՐԻԼԻՈՆ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐ ԳԱ՞Զ

***Վրաստանի Կախեթիի տարածաշրջանում հայտնաբերվել է 5,3 տրլն խորանարդ մետր բնական գազ: Այդ մասին հայտարարել է Frontera Resources ամերիկյան ընկերության ղեկավար Սթիվ Նիկարսոնը:***

Առաջիկա հինգ տարում ընկերությունը պատրաստվում է սկսել վառելիքի արտահանումը:

Հանդես գալով Վաշինգտոնում Ատլանտյան խորհրդի նիստում Frontera ընկերության ղեկավար Սթիվ Նիկարսոնը հայտարարեց, որ Վրաստանը 3-5 տարում կդառնա գազի արտահանող եւ կկարողանա գազով ապահովել Թուրքիային ու Արեւելյան Եվրոպային:

«Կարծում եմ, որ Վրաստանում հայտնաբերված գազային ռեսուրսը կազմում է մոտ 5 տրիլիոն խորանարդ մետր, ինչը կազմում է «Գազպրոմ»-ի պաշարների ծավալի 15 տոկոսը: Այդ ծավալը 10 տարվա ընթացքում կմատակարարվի շուկա եւ կփոխի գազի մատակարարման խաղի կանոնները: Վրաստանը գազ կմատակարարի Թուրքիային ու Արեւելյան Եվրոպային: Վրաստանը 3-5 տարում կդառնա գազ արտահանող»,- հայտարարեց Սթիվ Նիկարսոնը:

Նշենք, որ 2015 թվականին Frontera Resources-ը հանքավայրի պաշարները գնահատում էր 3,8 տրլն խորանարդ մետր:

Frontera Resources-ը նավթի-գազի ամերիկյան ընկերություն է, որն զբաղվում է ածխաջրածինների հետախուզմամբ եւ արդյունահանմամբ: Վրաստանում ընկերությունն իր աշխատանքն սկսել է 2014 թվականի ապրիլին:



## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

*Հունվարի 31-ին «Վրացական երազանք» կոալիցիայի կենտրոնակայանում կայացավ կուսակցության քաղխորհրդի հանդիպումը վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ: Ընդունվեց որոշում Կվիրիկաշվիլու թեկնածությունն առաջադրել կուսակցության նախագահի պաշտոնում:*

*Ինչպես նշեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար Կախի Կալաձեն, Գիորգի Կվիրիկաշվիլին դարձել է վերոնշյալ կուսակցության անդամ: Նրա խոսքերով, քաղխորհուրդը միաձայն որոշում է ընդունել Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունն առաջադրել կուսակցության նախագահի պաշտոնում:*

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՀԵՌԱՑԱՎ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

*Վրաստանի նախկին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնապես լքեց «Վրացական երազանք» կուսակցության շարքերը: Այդ մասին հայտնի դարձավ կուսակցության քաղխորհրդի հունվարի 31-ի նիստում: Ինչպես նշեց խորհրդարանական մեծամասնության ղեկավարներից Զվիադ Կվաճանտիրաձեն, քաղխորհուրդը հանդիպում է ունեցել Իրակլի Ղարիբաշվիլու հետ, որը կրկին անգամ հաստատել է քաղաքական գործունեությունը դադարեցնելու եւ «Վրացական երազանք» կուսակցության նախագահի պաշտոնից հեռանալու իր մտադրությունը:*

## ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

*Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն հանկարծակի ժամանել է Բաքու, որտեղ այցի շրջանակում բանակցութուններ է վարում Ադրբեջանի պետական նավթային ընկերության՝ SOCAR-ի նախագահ Ռովնագ Աբդուլլաեւի հետ: Հանդիպմանը կքննարկվեն ընթացիկ հարցեր եւ ապագայում հարաբերությունների հեռանկարները:*

*Հայտնի է, որ Վրաստանը ցանկանում է վերացնել ադրբեջանական գազից իր կախվածությունը եւ բնական գազի իր կարիքները բավարարել նաեւ Ռուսաստանից եւ Իրանից հնարավոր մատակարարումների հաշվին:*

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԵՐԴ, ԳՅՈՒՂ

# ՕՁՆԻՆ ԴԱՆԴԱՂ, ԲԱՅՑ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՅԼԵՐՈՎ ԳՆՈՒՄ Է ԱՌԱՋ



***Վերջին տարիներին նշանակալից փոփոխություններ են իրականացվել գյուղատնտեսության ոլորտի զարգացման, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Բավական է նշել, որ իշխանափոխությունից անմիջապես հետո գործարկվեցին պետական այնպիսի ծրագրեր, ինչպիսիք էին գյուղերի համընդհանուր գազիֆիկացման ծրագիրը, «Աջակցություն գյուղին» նախագիծը եւ այլն: Վերոնշյալ ծրագրերի շնորհիվ զգալի տեղաշարժեր են կատարվել նաեւ Ծալկայի մունիցիպալիտետի գյուղերում, մասնավորապես՝ Օզնի գյուղում: Իրականացված աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի մասին մեր հարցերին պատասխանում է Օզնիի գյուղապետ Աբգար Սողոյանը:***

***- Շուրջ տասը տարի է, ինչ զբաղեցնում եք Օզնիի գյուղապետի պաշտոնը: Այդ ժամանակահատվածում ի՞նչ աշխատանքներ են կատարվել գյուղի ենթակառուցային համակարգերի կարգավորման ուղղությամբ:***

- Այս առումով, առանձնակի տեղաշարժերն ակտիվացան վերջին 2-3 տարիների ընթացքում: Նախ ասեմ, որ Օզնին մունիցիպալիտետի խոշոր բնակավայրերից մեկն է: Այսօր գյուղում կա շուրջ 500 տնտեսություն: Առաջին հերթին, ուզում եմ նշել մեր գյուղի բնակիչների համար ամենացավագինի՝ խմելու ջրի հարցի լուծման մասին: Վերանորոգվեց ջրատարը, Խաբաբա կոչվող տեղամասից անցկացրինք ջրատար նոր գիծ: Կարելի է ասել, որ այդ կարեւորագույն հարցը, թեկուզեւ մասնակիորեն, արդեն կարգավորվել է: Մեծ ծավալի աշխատանքներ տարվեցին գյուղի էլեկտրահաղորդման գծերի նորացման ուղղությամբ: Անցկացվեցին նոր հաղորդալարեր, գյուղի փողոցներում տեղակայվեցին լամպավոր էլեկտրասյուներ: Վերանորոգվել եւ արդեն նորմալ գործում է գյուղի կենտրոնում գտնվող երիտասարդական տունը, ինչը յուրատեսակ հավաքատեղ է գյուղի բնակիչների համար: 45 հազար լարիով կարողացանք կառուցել ֆուտբոլային խաղադաշտ:

Վերոնշյալ աշխատանքները իրականացվել են մասամբ Վրաստանի կառավարության ֆինանսական աջակցությամբ, մասամբ՝ «Աջակցություն գյուղին» ծրագրով նախատեսված միջոցներով: Որոշակի գումար ստացանք նաեւ նավթի եւ գազի BP կորպորացիայից, որը խողովակաշարի համար յուրացրած հողատարածքների փոխհատուցման կարգով գյուղին փոխանցեց շուրջ 25 հազար լարի: Տեղական բյուջեն համալրում ենք նաեւ մեր արոտավայրերի առանձին հատվածները հարեւաններին վարձակալությամբ հանձնելու շնորհիվ: Այդ ամենը թույլ է տալիս իրականացնել ենթակառույցների բարելավմանն ուղղված գործեր:

***- Մի քանի խոսք՝ առաջիկա ծրագրերի մասին:***

- 2016 թվականին ծրագրել ենք գյուղի բնակիչների համար ոչ պակաս նշանակության մի շարք աշխատանքներ: Շտապ վերանորոգման կարիք ունեն ինչպես գյուղ տանող, այնպես էլ՝ գյուղամիջյան ճանապարհները: Դրա համար բավականին պատկառելի միջոցներ կպահանջվեն: Հարկ է վերանորոգել նաեւ գյուղի մարզադահլիճը, որը ներկայումս վթարային վիճակում է: Մի խոսքով, բավականին աշխատանքներ թեեւ կատարվել են, բայց դա ինքնաբավարարման առիթ չպետք է դառնա, մանավանդ որ, առաջիկա անելիքները դեռ շատ են:

***ԱՆՈՒՇ ԴԻՄԱՔՍՅԱՆ***
***Օզնի, Ծալկայի մունիցիպալիտետ***

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՆՄԱՆ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ, ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԱԺԱՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լին նշեց, որ Վրաստանում մեծապես գնահատում են հազարամյակների պատմություն ունեցող վրաց եւ հայ ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունները եւ ընդգծեց, որ տարածաշրջանում նման հին պատմություն ունեցող բարեկամ ժողովուրդներին ոչինչ չի կարող բաժանել այն ճանապարհից, որը նրանք սկսել են հազարամյակներ առաջ ու միասին շարունակելու են նույնքան երկար տարիներ:

### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու գլխավորած պատվիրակության դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, որը կայացավ փետրվարի մեկին Հայաստանի պաշտպանության նախարարության վարչական համալիրում, տեղի ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ Թինա Խիդաշելու առանձնազրույցը, որին հաջորդեց պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններին, միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանը, ինչպես նաեւ երկու երկրների միջեւ պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Ապա պաշտպանական գերատեսչությունների միջազգային համագործակցության համար պատասխանատու պաշտոնյաները ստորագրեցին Վրաստանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարությունների միջեւ 2016թ. ռազմական համագործակցության ծրագիրը: 2010թ. ի վեր պլանային հիմունքներով իրականացվող երկկողմ ռազմական համագործակցության ամենամյա ծրագրի այս տարվա հիմնական ուղենիշներն են փորձի փոխանակումը խաղաղապահության, ռազմական կրթության, մասնագիտական վերապատրաստման եւ ռազմավարական պլանավորման ոլորտներում:

Հանդիպման վերջում անցկացվեցՕհանյանի եւ Թ.Խիդաշելու համատեղ մամլո ասուլիսը:

### «ՉՆԱՅԱԾ ՄԵՆՔ ՏԱՐԲԵՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՆՔ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ. . .»




Հայաստանն ու Վրաստանը կշարունակեն տարածաշրջանում խաղաղության պահպանման շուրջ համագործակցությունը: Այս մասին համատեղ մամլո ասուլիսում հայտնեց Սեյրան Օհանյանը: «Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու հետ երկկողմ հանդիպման ու բանակցությունների հիմքում ընկած էր հայ-վրացական դարավոր բարեկամությունը, հարեւանությունը եւ այն ոլորտները, որոնք ապահովում են հայ-վրացական լավ հարաբերությունները՝ մշակույթը, տուրիզմը եւ այլն: Մենք անդրադարձանք նաեւ երկկողմ պաշտպանական հարաբերություններին եւ կարեւորեցինք այդ հարաբերությունների հիմքում փոխադարձ վստահության մթնոլորտի ձեւավորման շրջանակներում տարածաշրջանում կայանության եւ անվտանգության խնդիրներին անդրադառնալը»,- ասաց Հայաստանի պաշտպանության նախարարը:

Երկու երկրների նախարարներն ընդգծեցին այն հանգամանքը, որ չնայած նրան, որ իրենց երկրներն անվտանագային տարբեր համակարգերի կողմնակից են (Հայաստանը՝ ՀԱՊԿ-ի, իսկ Վրաստանը՝ ՆԱՏՕ-ի), դա չի խանգարում տարածաշրջանում անվտանգության, խաղաղության պահպանման ապահովման ուղղությամբ տարվող համատեղ աշխատանքներին:

«Համատեղ աշխատանքների լավ օրինակ է Աֆղանստանում վրաց եւ հայ զինվորների ծառայությունը: Չնայած նրան, որ մենք մեզ տեսնում ենք տարբեր ռազմական խմբավորումներում, այնուամենայնիվ ես այստեղ եմ, որպեսզի մենք քննարկենք առաջին հերթին Հարավային Կովկասի խաղաղությունը: Այն հիմնական կետն է, որ միավորում է մեզ ու մեր ընդհանուր համագործակցությունը տարվում է այդ ուղղությամբ»,- ասաց Թինա Խիդաշելին:

Վրաստանի պաշտպանության նախարարը նշեց, որ Վրաստանը շարունակում է մնալ Հայաստանի կողքին, որպեսզի անհրաժեշտության դեպքում երկու երկրներն ապահովեն տարածաշրջանում ընդհանուր բարեկեցությունն ու խաղաղությունը:

### ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի, Ազգային ժողովի նախագահի Գալուստ Սահակյանի եւ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

* * *

Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում՝ Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպում ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ:

*«Արմենպրես-Վրաստան»*

ՄՇԱԿՈՒՅԹ

# ԲԱՐՁՐԱՑԱՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



թանալու հնարավորություն տվեցին: Ի դեպ, օպերային թատրոնի առաջին շենքը Թբիլիսիում կառուցվել ու բացվել է 1846թ. այսօրվա Ազատության հրապարակի տարածքում, մեծանուն մեկենաս Գաբրիել Թամամշեւի (Թամամշյան) միջոցներով, ցավոք, բայց թատրոնը գործեց միայն 23 տարի, եւ փակվեց մեծ հրդեհի պատճառով 1884 թվականին: Դրանից հետո 1886-ին սկսվեց եւ 1896-ին ավարտվեց նոր օպերային թատրոնի շենքի կառուցումը Ռուսթավելու պողոտայում:

Վրացական օպերան իր նոր թատերաշրջանը, որ նվիրել էր Մ.Ամիրանաշվիլուն, սկսեց Զ.Փալիաշվիլու «Աբեսալոմ եւ Էթերի» ներկայացմամբ, ռեժիսոր՝ Գիզո Ժորդանիա, նկարիչ՝ Գոգի Ալեկսի-Մեսխիշվիլի, դիրիժոր՝ Զազա Ազմաիփարաշվիլի, գլխավոր դերակատարներն էին աշխարհահռչակ օպերային աստղեր Լադո Աթանելին, Թամար Իվերին եւ Թեիմուրազ Գուգուշվիլին:

***Մի հետաքրքիր դրվագ, որը կապված է առաջին պրեմիերայի հետ, որը կայացավ 1919թ. փետրվարի 21-ին:***

*Այլ կերպ ասած «Աբեսալոմ եւ Էթերին» ոչ միայն վրաց ժողովրդի հպարտությունն է, վրացական օպերայի այցետոմսը, գրեթե յուրաքանչյուր թատերաշրջանը բացող պրեմիերան, այլեւ նրա հետ է կապված շատ հետաքրքիր ու տրագիկոմեդիկ մի պատմություն: Պրեմիերայի դիրիժորը Էմմանուիլ Ստոլերմանն էր լինելու: Բայց նա չափից ավելի էմոցիոնալ կին ուներ եւ ընտանեկան հերթական վեճը բերել էր նրան, որ կինը պատռել էր «Աբեսալոմ եւ Էթերիի» միակ վրացական պարտիտուրան: Բորբոքված Ստոլերմանը կրակել էր կնոջ վրա եւ դատաստանի առջեւ կանգնել: Դատարանը որպես մեղմացնող հանգամանք հաշվի էր առել հանգուցյալ կնոջ ողջ քաղաքում հայտնի բարդ բնավորությունը եւ բաց թողել դիրիժորին տարօրինակ ձեւակերպմամբ՝ «կիրառել ամենաբարձր պատժամիջոցը, հաշվի առնելով այն, որ այդ ժամկետը ներառի այն տասնութ տարիները, որոնք դատապարտյալն անցկացրել է հանգուցյալ կնոջ հետ»: Իսկ դիրիժորական հեռավարի առջեւ պրեմիերայի ժամանակ կանգնեց Զաքարիա Փալիաշվիլին, ով ստիպված եղավ գրեթե ամբողջովին վերարտադրել պարտիտուրան: Գլխավոր դերակատարները դարձան Բորիս Զալիպսկին եւ Օլգա Բախուտաշվիլի-Շուլգինան:*

*Այդ դեպքից հետո, արդեն երկար տարիներ, ասես ավանդավար հենց այս ներկայացմամբ է բացվում Թբիլիսիի օպերայի եւ բալետի Զ.Փալիաշվիլու անվան թատրոնը:*

**Բացման տոնական օրն իրենց ներկայությամբ պատվեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, նախարարներ, արվեստի վաստակավոր գործիչներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կառույցի ներկայացուցիչներ: Ներկա էր նաեւ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորած հայաստանյան պատվիրակությունը, ի դեպ միակը, որ պաշտոնապես հրավիրվել էր արտերկրից: Հյուրերի թվում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:**



Պրեմիերայից հետո մենք խնդրեցինք ներկաներից մի քանիսին կիսվել իրենց տպավորություններով:

**Հասմիկ Պողոսյան.** «Ամեն ինչ առավել քան հոյակապ էր: Սա մշակութային մեծ ու վառ տոն էր: Բեմին ու դահլիճում էին համաշխարհային ճանաչման անզուգական երգիչներ, հնչում էր բարձրարվեստ երաժշտություն, ներկայացվեց հրաշալի սցենոգրաֆիա: Երջանիկ եմ, որ պատմական այս իրադարձության մասնակիցն ու վկան եմ եւ կիսում եմ ուրախալի այս պահերն իմ վրացի գործընկերների հետ»:

**Յուրի Վարդանյան.** «Թատրոնն ինձ հարազատ է մանկուց, այն տարիներից, երբ արձակուրդներս անցկացնում էի Թբիլիսիում մորաքրոջս տանը եւ հաճախ անցնում էի հենց այս հոյակերտ շենքի կողքով: Այն առաջին օպերային թատրոնն էր էր Կովկասում, շենքը կառուցվել էր 1896 թվականին, հազվագյուտ էր իր ճարտարապետությամբ եւ, ի դեպ, առ այսօր շարունակում է մնալ այդպիսին: Այսօր, ես մեծ բավականություն ստացա Զ.Փալիաշվիլու «Աբեսալոմ եւ Էթերիից», հոյակապ սինթեզ էր վրացական ու եվրոպական երաժշտության»:

**Գիզո Ժորդանիա, «Աբեսալոմ եւ Էթերի» պրեմիերայի ռեժիսոր.** «Խոսքս ասեմ ոչ վրացերեն, քանի որ հավլաբարցի եմ ու հենց դրա համար «Սովետական Վրաստանի», վայ կներեք «Վրաստան» գազեթի համար հայերեն պիտի խոսամ: Ինչ լավ ա, որ էս սիրուն օրը մեզ հետ են Հասմիկ Պողոսյանն ու Յուրի Վարդանյանը, որի բալեւշիկն եմ եղել ժամանակին: Այսօր նրանք մեզ հետ են ու արդեն մեզ են բալելշիկություն անում... Մենք՝ վրացիք ու հայերս, այ սենց միշտ միասին պետք է լինենք»:

**Վան Բայբուրթյան, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր.** «Միջնակարգս ավարտել եմ նախկին Լերմոնտով փողոցի վրա գտնվող թիվ 40 հայոց դպրոցում: Եվ օպերային, թբիլիսյան թատրոններին մերձեցել հենց այդ տարիներին: Վրաց լեզվի մեր ուսուցչուհին՝ Մարիամ Շատիրիշվիլին յուրաքանչյուր շաբաթ մեզ այստեղ, կամ Ռուսթավելու, Գրիբոյեդովի թատրոն էր բերում: Իհարկե ունեինք նաեւ մեր



հայոց թատրոնի աբոնիմենտները: Օրվա խորհուրդն ինձ ստիպեց հիշել ու նաեւ կոչել մայրաքաղաքի երեք հայկական դպրոցների սաներին, նրանց մանկավարժներին, եթե ոչ յուրաքանչյուր շաբաթ, ապա ամիսը մեկ գալ այստեղ, վայելել, հոգեւոր սնունդ առնել ու բարձրաճաշակ արվեստով դաստիարակվել»:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*